


ՏՆՕՐԵՆ-ԽՄԲԱԳԻՐ
 Ե. ՓՈՐՈՍԵԱՆ
 ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Ե ԳՈՐԾԹԻՆՆ
 ՊԵՏԻ Է ՈՒՂՆԵՆ ԱՌ
 Խմբագր. ԱՐՇԱՆՈՅՍ Լուսագրի
 ԳԱՇԻՔԷ (Հապոպոսի)

Rédaction du journal arménien
ARCHA LOUICE
 HABBANIEH LE CAIRE (Égypte)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵՄԲԵՐԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՉԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահլիճ. 60	
Վեցամսեայ » 35	
ՕՏԱՐ ԵՐԿՈՒՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ 20	
Վեցամսեայ » 12	

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԵՒԿ Է
 ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԵՄԽԻՐԸ
 ԽՄԲԱԳՐՈՒՔԵԱՆԱ ՎՐԱՅ :

Խմբագրութեանն ուղղուած
 գրութիւնք ԵՍ չ'են սրուիր:

ՏԻՈՒՐ ԷՉ ՄԸ

Եզրագրոսի հայ գաղութը ունեցած է իւր մէջ ազդեցիկ անձնաւորութիւններ, որք քիչ թէ շատ խոնարհ տեղ մը գրաւած են երկրին ժամանակակից պատմութեանը մէջ. բայց հակառակ ամէն նպատաւոր հանգամանաց՝ հայը չ'է գրաւած հոս համեմատապէս ա'յն կարեւոր տեղը ուր պէտք էր որ գտնուէր. պէտք էր որ երկրին մէջ գտնուող այս բազմազան ազգութեանց մէջ ունենար իրեն համար ամէն կերպիւ պատուաբեր դիրք մը, պատուաբեր յաջ ստարաց, պատուաբեր ընդհանուր ազգութեան:

Ինչո՞ւ չ'ունենար, զոր օրինակ, ուր հիւանդանոցը, իւր լարան-ընթերցատունը (այս բառին լուրջ առմամբը). ինչո՞ւ չ'ունենար, վերջապէս, բարձրագոյն նախակրթարան մը՝ որուն ծախքերը ապահովուած լինէին եկամտաներով և Եւրոպական նման օրինակ հաստատութեանց ծրագրին վերայ ձեռած, ուր կարենար ինամեալ և ազգային դաստիարակութիւն մը ջանքեր մեծազնէից, և ուր պատրաստուէր՝ ի մի բան՝ տեղւոյս ապագայ հայ սերունդը: Չափազանցեալ չի լինիր կարծեմ եթէ ըսեմ թէ նմանօրինակ հաստատութիւն մը մեծագոյն բարիքը պիտի լինէր քանի որ խնդիրը դաստիարակութեան վերայ է: «Կրթէ՛ ան՝ հատ մը, կրթեցիր ընտանիք մը. կրթէ՛ ընտանիք մը, կրթեցիր նաև ամբողջ ազգ մը», ինչպէ՞ս ըսած է հեղինակ մը:

Երկար պիտի լինէր թուումն մասանցը ընել հոս այս «ինչո՞ւ» ներուն. անշուշտ գրամը չ'էր որ կը պակսէր. պատճառը գո՞ւրբին չ'է գտնելը, փնտուելու հարկ չ'կայ:

Այն ցուրտ անտարբերութիւնը որով կը վերաբերուին առ ազգն — ա'յն անտարբերութիւնը որ պատճառ եղած է ի մէջ այլոց՝ Ռուսաստանի և Լեհաստանի ընդ միջտ աւաղելի հայ գաղթականութեանց կորստեանը, գաղթականութիւնք՝ որք պատուութեան կը վերաբերին այլ ևս — ահա ճիշտ այդ սառն անտարբերութիւնն է որ կը տիրէ տեղւոյս ժողովրդեան կարեւոր մէկ մասին վերայ:

Գուցէ առարկուի թէ՛ ժամանակին գտնուած են հարուստներ որք ուզած են օգտակար լինել ազգին, բայց տեսնելով թէ ըստ բաւականին զնահատում չ'կայ՝ մէկ կողմ թողուցած են ծրագրերին: Այս տեսակ առարկութիւն մը ընելը շատ փոքուն բան մ'է. թէ գտնուած են հոս այդ տեսակ հարուստներ և եղած առարկութիւնն ալ ստոյգ է՝ ենթադրելով պահ մը այդպէս՝ սա ճշմարտ է թէ երբ մարդ լրջօրէն կ'որոշէ իրեննորուն օգտակար լինել, այդ տեսակ մէկը շատ ականջ չի կախեր շուրջը դարձած աժանքնադատութեանց, քանի որ մեծ գործերու ճշմարտ քննադատը ապագայ պատմութիւնն է:

ՁԵ ի գաղթականութիւնը ունեցած է իւր բարեբար ազդեցութիւնը արտասահմանի հայութեան վերայ՝ թօթափելով զանոնք իրենց խոր քունէն. եթէ երբէք ներելի է բարիք մը նշմարել այդ ընդհանուր ազգութեան մէջ՝ այն ալ այս եղած է ապահովապէս:

Գաղթականութեան ունեցած այս բարեբար ազդեցութիւնը արդիւնաւորելու համար պէտք է որ տեղւոյս բնիկ հայ տարրը՝ իւր կարողութեան սահմանին մէջ՝ միացունէ իւր ոյժերը նորեկին, և այդպէս դործեն գիտակից ոյժերով ընդհանուրին օգտին համար. այսպէսով վերջ մը սրուած կը լինի անցելոյն մէջ տիրած անտարբերութեանը՝ որ մահացուցիչ կրնար լինել ազգայնութեան տեսակէտով:

Բայց պէտք է նախ համերաշխութիւն մը տիրէ ժողովրդեան զանազան դասակարգերուն մէջ. Վարիչ մարմինը իւր կարգին պէտք է տայ օրինակը. ամէն խնդիր՝ ամէն տեղային ազգային խնդիր, որ կը ներկայանայ ժողովոյն սեղանին վերայ, պէտք է որ իւր օրինաւոր լուծումը ստանայ: «Օրինաւոր» բառը առաձգական է... Եզրագրոսի մէջ. ինչ որ օրինաւոր է ժողովականաց տեսակէտով, կատարելապէս փաստակար է գաղութին շահուցը տեսակէտով. ինչ ևս հոս «օրինաւոր» ըսելով պարզապէս կ'իմանամ տրամադրութիւնները մեր նախահարց և մեր ժամանակակից ազգային օրինաց, ինչպէս նաև ազգային ամէն նուիրական արանդութեանց որք անգիր օրէնքներ են՝ և որոնց պահպանութեանը համար պէտք

է որ ամեն հայ անհատ նախանձախնդիր լինի:

Յու է ինձ ըսել թէ՛ տեղւոյս վարիչ Մարմնոյն Պատուարժան անդամք կը հետեւին այն տեսակ քաղաքականութեան մը՝ որ միայն կը ծառայէ լայն խրամատ մը բանալու նոյն ազգութեան և դաւանանքին վերաբերող ժողովրդեան զանազան խաւերուն մէջ. այս տեսակ քաղաքականութիւն մը՝ հեռի հաշտարար լինելէ, է՝ միեւնոյն ժամանակ անհեռատես և ո՛չ շրջահայեաց մարդ կը զարմանայ տեսնելով քիչ շատ Եւրոպական աչատ կրթութիւն ստացող — կամ գէթ այնպէս երեւող — անձեր՝ որք փոխանակ օրինակը տալու ստացուած առողջ դաստիարակութեան մը, յետագէմ և միապետական ճամբու մը կը հետեւին. աւելորդ է ըսել թէ միապետական ուղին միշտ անել է՝ ո՛վ որ ալ լինի անոր ռահվիրան: Կիրակէ առաւօտ Պատարագի միջոցին Բոջիսի և սօփրանիներու ներկայութիւնը եկեղեցւոյ շրջափակին մէջ՝ ամենէն կենդանի և ամենէն տխուր օրինակն է որ ակնյայտի կը ցուցնէ թէ ո՛ր աստիճան անկում կրած է ազգային բարոյականը Գահիրէի մէջ:

ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄԼԵԱՆ

Ճրանս. ԹԱՆ Լրագիրը իւր 16 հոկտեմբերի թուոյն մէջ հետեւեալ խմբագրականով հայկական հարցը կը շօշափէ, զոր մեր ընթերցողաց ներկայացնել անօգուտ չ'ենք համարիր:

ԱՐԵՒԵԼՔԻ ԳՈՐԾԵՐԸ

Ժամանակէ մը ի վեր Արեւելքի մէջ իրերու և միտքերու գրութեան մասին վրդովիչ զրոյցներ կը շրջին: Պաշտօնեան թերակողին, որ միշտ խուլ խնորու մը ենթակայ է, նորէն անիշխանութեան երեւոյթ մը կ'ընծայէ, մասնաւոր Օսմանեան կայսրութեան և Սլաւական իշխանութիւններու սահմաններուն վրայ, ինչպէս նաև Ալպանիոյ և Մակեդոնիոյ կողմերը՝ ուր անկարգութիւններ ծագած ըլլալը կը յայտնուի՝ հակառակ լուծութիւն պահելու ունայն ջանքերուն:

Տագնապալի լուրեր կը շարունակեն մեզի հասնիլ Փոքր Ասիայէն, այսինքն հանդիսաւայրէն ա'յն սոսկալի արհաւիրքներուն որոնք 19րդ դարավերջի իբր անջնջելի արատը պիտի մնան Եւրոպայի ճակարկ վրայ: Այս զրոյցներուն նայելով Հայ ազգին թշուառ բեկորներուն դէմ խիստ միջոցներ ձեռք կ'առնուին, բարձրագոյն հրամանով կը փակ-

ուրի որբանոցները եւ անկեղանոցներ՝ որոնց հիւանդ անկար կամ հաշմանդամ ապաստանակները կ'ըստիպուին թողուլ իրենց անկողինները, հեծեծագին մանուկներ եւ կիներ բազմութեամբ կը քաշքշուին մեծ պողոտաներուն վրայ, առանց գիտնալու թէ ուր կ'երթան կամ ո՛ւր պիտի գիշերեն:

Եթէ պէտք է հաւատք ընծայել կարգ մը տեղեկութիւններու, որոնց վաւերականութիւնը միզի համար զժողովուրդը է ստուգել, բայց որոնց արժէքը ի յաւաքագուճէ տարակոյսի ենթարկելն ալ հակառակ պիտի ըլլար մտաւոր անցեալի դառնակալիժ փորձառութեանը, կոտորածները վերակտուելու են մէկ քանի նահանգներու մէջ: Թէեւ կ'ըսուի թէ մինչեւ հիմա քիչ համեմատութեամբ միայն արեւն հոսած է, բայց ստիկէ չենք կրնար հետեւցնել թէ՛ չորս տարի առաջ քաղաքակիրթ աշխարհին սարսափ ազդող ջաշտերու վերակաման նշանը տրուած չ'ըլլայ: Կը հաւատեն թէ Օսմանեան իշխանութիւնները, ըլլա՛յ տկարութեամբ, ըլլա՛յ մեղաւորութեամբ, խիստ քիչ հոգածութիւն ցոյց կուտան Սուլթանին տարաբազը հայատակներուն ապահովութեանը նպաստելու, մինչդեռ այնքան ջանադիր են հերքելու բոլորովին իրական միջազգայնորդ եւ հաճոյակատար լուծիւն վարագործը ձգելու եղեռնագործութիւններու վրայ որոնք տարափոխիկ բնաւորութիւն մ'ունին:

Փութանք ըսել թէ, այն մամուլը որ իր պարտականութեանց գիտակցութիւնը ունի եւ հակամէտ չէ ո՛չ թեթեւամտորէն մեղադրելու ոչ ալ հրամանով մտքեր հանդարտեցնելու, անկարող է՝ այս պահուստ ձեռքի տակ գտնուած գնահատման տարբերքներով վերահասու ըլլալ բուն իրականութեան, թէ արդեօք շուկայական զրոյցներու հանդէպ կը գտնուինք, թէ չէ՛ նորագոյն աղէտի մը արձագանքն է որ միզի կը հասնի: Բայց յայտնի է թէ այսպիսի տարածած տարածախոսութիւններու ծաւալում գտնալն իսկ կը հաստատէ անհաւատարակչութիւն, անհանգստութեան եւ սարսափի վիճակի մը գոյութիւնը: Եթէ նոյն իսկ պէտք ըլլայ խոշոր բաժին մը տալ երեւակայութեան եւ խիստ վերապահութեամբ մը լսել լուր հնարողիքը, որոնք երբեմն մասնաւոր նպատակներու կը ծառայեն, դարձեալ ճշմարիտ է որ՝ այս եղելութիւններուն սոսկ հաւանականութիւնն իսկ, ինչպէս նաեւ այն երբեմն անյազ եւ երբեմն յուսահատ գերաւաւանութիւնը՝ որով թէ՛ Արեւելքի եւ թէ՛ Եւրոպայի մէջ կ'ընդունուին այդ շշուկները, բաւական են ապացուցանելու թէ միշտ փտած բան մը կայ Օսմանեան կայսրութեան զրուսեանը մէջ եւ թէ միշտ տեղիք կայ սպասելու ցաւալից զարթունանքու:

Կ. Պոլսոյ մէջ՝ ուրիշ ամէն տեղերէ աւելի՝ անհանգստութիւնը եւ տագնապը կը տիրապետեն:

Սուլթան Համիտն իսկ այլեւս Յունաստանի վրայ տարած իր յաղթանակին — կամ լաւ եւս է ըսել՝ իր փոխանորդներու յաղթութիւններուն — արբշտութիւնը վայելելու սիրտ չունի: Զուր տեղը ինքզինքը կը փառաւորէ աշխարհակալի եւ Ղազիի շողողուն տիրոջներով, եւ զուր տեղը կը միութարուի այն պատրաստականութիւնէն որը զեռ վերջերս Եւրոպայի իշխանապետներուն ամենէն զօրաւորներէն մէկը՝ նոյն ինքն Գերմանիոյ կայսրը՝ ցոյց տուաւ, կարծես իրեն գիրկը զիմելու եւ իր բարի շնորհները աղերսելու: Այս բոլոր փառքերը ծուխի մը պէս շատ շուտով օդը ցնդեցան: Իր ճգնարանին մէջ փակուած, իր հպատակներուն անտեսանելի՝ անձնապահ զօրքերու պարիսպով մը կը պատէ իր շուրջը: Այս հաւատարիմ արփանակներն են սակայն որ վերջերս ամենէն զէջ մտահոգութիւնները պատճառեցին իրեն: Ալպանական անձնապահ գունդը, զանազան միջազգայնորդ իր հետեւանք՝ զազրած է Վեհապետին կատարեալ վստահութիւն ներշնչելէ: Մեծ Վիզիրին որբոյն Ալպանիացի Պէյի մը ձեռքով սպաննութեան նոր զէպքը եկաւ պատկեց պալատին ստուերին մէջ գործուած ոճիրներու եւ դաւերու շարքը: Պահ մը Ապալու Համիտ յուսաց իր Ալպանիացի անձնապահ զօրքերուն տեղ գնել Սեւ-Լեռնայիներ որոնք Նիֆիդա իշխանէն ուզած էր:

Այս լեռնականները քաջ, անձնուէր եւ հլու են, վերին աստիճանի ցեղապետի ոգի մը կը կրեն, եթէ իրենց իշխանը հրաման տար, Սուլթանը պիտի պաշտպանէին նոյնքան եւանդով որքան

յօժարամտութեամբ պիտի յարձակէին անոր վրայ, եթէ այդ մասին հրահանգ մը ստանային, մէկ խօսքով ամենայաւ տեսակէն պահապան շուներ են: Գծազգաբար այս բանակցութիւնը արգիւնքի մը չի յանգեցաւ: Կրնայ ըսուել ուրեմն թէ Եւրոպը Բէօզիլի կայսերական անձնապահ զօրքերուն յաջողութեան ժամանակամիջոցն է հիմա: Այսուամենայնիւ վերջին տեսնենք Սուլթանը մէկ քանի քաղաական յաջողութիւններ ձեռք բերաւ, որոնք իրեն նոր խրախոյս մը առած պէտք է ըլլան:

Իր դիւանագիտութիւնը խիստ ճարտիկ գրտնուեցաւ Փոքր-Ասիոյ երկաթուղիներու վերաբերմամբ մեծ պետութիւններու հակամրցող ցանկութիւնները շահագործելու եւ կնքելու համար կարգադրութիւններ որոնց կարեւորութիւնը լոկ տընտեսական ու ելմտական չէ: Նորէն արեւմուտքի մայրաքաղաքները ուղարկել ձէլալէտտին փաշան կաշառելու համար մէկ քանի անգամներ երիտասարդ թուրք ընդդիմադիր կուսակցութեան, որուն մէջ իրաւունքի շատ ազիւր ախոյեաններու հետ կը գտնուին ոչ սակաւաթիւ պարզ բազմաթիւներ ալ:

Ի վերջոյ հայկական խնդիրը նորէն սուր կերպարանք ստանալ սպառնացած ըլլալով, Ապալու Համիտ շատ հնարիմաց կերպով անոր մէջէն ալ ելաւ Հայոց Պատրիարքը անգամ մ'ալ իր հրատարականք տուած էր՝ ազգային վարչութեան հետ մէկտեղ, ճգնաժամ մը անխուսափելի կ'երեւար Մէկէ՛ն Սուլթանը փութաց նորոգել խոստումներ որոնք մէկ քանի ջախջախիչ խոստովանութիւններ կը կազմին եւ որոնք արդէն շատ անգամներ եղած են: Մէկէ՛ն Պատրիարքը ետ առաւ հրատարականք, եւ ներդաշնակութիւնը նորէն կը տրիէ Գում-Գափուի եւ Եւրոպը Բէօզիլի միջեւ: Հաւանական է որ այն 52 հայերէն՝ որոնց պառտ արձակումը կը ծանուցուի, մէկ քանի զժողովներ իրապէս օգտուին այս կարգադրութիւնէն: Այս բանը անշուշտ դիպուածական շահ մ'է, ո՛չ այնչափ բուն իսկ ազգային գաւիթ, որչափ այդ անհատներուն համար: Այնպէս որ դարձեալ կը հաստատուի՝ թէ հայկական խնդիրը, ինչպէս այն ամէն խնդիրները որոնք արեւելեան հարցը կը կազմին, ճիշտ այն կէտին վրայ կը գտնուին ուր որ զայն թողուցին 1895 — 96 ի ջարդերը:

Հ Ե Ռ Ա Ք Ի Ր

ՌԻԻԹԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

Լէյսիսիք 30 հոկտեմբեր. — Օգտագարիկով մը վերէն կրցան տեղեկանալ թէ՛ Պօէրները 16.000 — 20.000 կիսաշղանակի ձեռով քաղաքին հիւսիսային կողմը կը շրջապատեն, կ'ըրաղին զօրաւոր մասերու բաժնուելու, մինչ ուրիշներ կը յառաջանան Անգղիական զինքին գէպ ի հիւսիսակողմը երկաթուղին կտրելու մտադրութեամբ:

Պօէրներու դիտող լուրքերը 1500ի չափ ջորի գերի բռնած են Լէյսիսիթէն:

Եւր Ջօրավարին յառաջապահ զօրաց պատրաստական ամբողջ գոյքերը Տընտի ձգուած են:

Լոնտոն 30 հոկտեմբեր. — Գերմանիոյ հոյսը « Ռօեալ Տրակօնասի » պատույզնդ ապետի հանգամանք իր ողջերթը հեռագրած է անոնց, ողջ առողջ վերագաւնալու յոյսը յայտնելով:

Լէյսիսիք 30 հոկտեմբեր. — Առաւօտեան ժամը հինգին Պօէրները թնթանօթներով քաղաքին վրայ կրակ ընել սկսեցին բայց անգղիական հրետանիին եօթը հարուածները բաւեցին Պօէրներուն կրակը դադարեցնելու: Այս վայրկեանին թշնամին

կը յառաջանայ Անգղիական զինքին ձախ կողման վրայ:

Ջօրավար Հուայթ կիմացնէ թէ այսօր բաղխում մը տեղի ունեցաւ, որուն մէջ Պօէրները քանի մը ժամեր պատերազմելէ վերջ ետ մղուած են: Անգղիական կորուստն հարիւր մարդերու կը բարձրանայ, իսկ թշնամիներ աւելի շատ են: Պօէրները բազմաթիւ էին և շատ թնթանօթ ունէին: Ամբողջ Անգղիական ուժերը մասնակցեցան քաղաքը նուաճող զինք մը գրաւելու համար որ պարպուած գտնուեցաւ թշնամին շատ խստութեամբ յարձակեցաւ թէեւ, բայց շատ մղոններ ետ մղուեցաւ: Անգղիական զինուորները հանդարտ բանակատեղը վերագարձան: Իռլանտական կուլուստը զօրագունդը և լեռնային հրետանի մը երէկ իրիկուն բանակին ձախ թեկն վրայ զրկուեցան և մինչև հիմա չ'վերագարձան:

Մթութեան մէջ հրայանաձգութիւնը սարսափեցուց ջորիները, որք յանկարծ փախան իրենց հետ քանի մը թնթանօթներ տանելով: Ջօրավար Հուայթ կը յուսայ բռնել փախած ջորիներն:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս երկիցս գրուեցաւ այս էջերուն մէջ, մենք կ'սպասէինք որ Վսեմ Տիգրան փաշայի գալուստը և Պատ. Երեսփոխանական Ժողովոյ անցեալ շաբթուան դումարումը՝ խաղաղ վերջ մը գնէին ժողովաժողովրդական յարաբերութեանց մէջ երկու երեք և աւելի ամիսներէ հետէ տիրող ձգտուն վիճակին, որ Դաւաթի մը անարգ Վաւաթներու բռնած պառակտող ընթացքովը առաջացած էր: Մինչդեռ այդ երկու երեք և աւելի ամիսներուն մէջ եթէ ժողով և ժողովուրդ համաձայնութեան մէջ գործէին, շատ հաւանական էր որ բաւական թուով ազգօգուտ ձեռնարկներ կրնային ի գլուխ հանուիլ:

Ահաւասիկ Պատկ. Երեսփոխանական Ժողովոյ խաղաղասիրական որոշումը, որուն ակնգէտ կ'սպասէինք:

Կը հաւատեն թէ այս կիրակի, իբր արդիւնք անցեալ երեքշաբթի օրուան գուժարուած Պատկ. Ժողովոյ որոշման, եկեղեցին լեցուած է եղբր Պոլիսը յիշեցնող փոխաններով, ծպտուն յրտեսներով, լրտեսապետներով և մանաւանդ Պոլսոյ ահաւելի գէպքին ժամանակ գործածութիւնը պաշտօնապէս արտօնեալ ներպաշտներէն օրինակուած, ներպաշտ ակիր դաւիթներով: Ներկաներուն թիւը ամբողջացնելու համար երբ աւելցուի անոնց վրայ զամբիւղներով ձեռնակապանքները (Բէշեյլմէ) և երկաթէ ձողիկները, որոնք ինչպէս կը հաստատեն, զետեղուած են եղբր Եկեղեցւոյ շրջափակին մէջ անկիւն մը, ի սեւ բարիպաշտ և երկիւղած հայ ժողովրդեան. ուրպէս զի եթէ յարմար գատուի աստուածապաշտները կաւելով դժոխոց կրակներուն մէջ զրկուին, « անդ լիցի լալ և կրճել աստուանց » ր ըստուգարաններու համար:

Վսեմ. Տիգրան փառալուստ անունով կգած այս չափազանցեալ ու եռանդուն գործունէութիւնը բոլորովին ալ անօգուտ չ'համարուիր կ'ըսեն ոմանց համար. անոնց՝ որոնք կը պատկանին եկեղեցւոյ շրջափակին տամուկ միջոցառումն մէջ կծկտած ազգային ցեցերու զասակարգին, որովհետեւ ինչպէս շատեր պատկանուած են, այս զասակարգը որ ի բացակայութեան Վսեմ. Տիգրան փառալուստ տիրութեան սե. քողով մը պատած էր իր գէտքը և հազիւ ուրեմն իր գէտքը ելլողը բարեկերտ սիրտը կ'ունենար, հիմակ իրեն գլուխը բարձրացուցած, ժպիտ ի շրթունս, կը մտնէ ժողովուրդ գասակարգին մէջ ու իրեն ազատ ու լրտեսի բերանով շատագու վերու կեցէ, նորին Վսեմութեան անունով և թերևս ոչ-անորինութեամբ գործուած այս անտեղի և գայթակղեցուցիչ կարգադրութիւնները:

Ասոնցմէ զատ պէ՛տք է որ մտնայ առաջ-նորդական փոխ-տեղապահի պաշտօնին բոլորովին անարժան և անենապէտ քահանան, որ երբ առաջին անգամ ժողովոց մէկ յաւելեալ անդամին կողմէն հարկ դատուած էր հինգ հատ ոստիկան բերել եկեղեցւոյ դուռը, այն ատեն նախ իւր քսակէն վճարած ու ճամբած է զանոնք ու յետոյ ազգային անտուկէն գանձած. Ուրեմն պէ՛տք է կըլլայ հարցնել թէ ո՞վ վճարեց մինչև ցարդ այդ պաշտօնով բերուած կառավարական պաշտօնեաներն և փոխաները ու այս վերջին անգամ ալ Անգլո-թրանսլալական պատերազմին մէջ միայն պէտք է լլալու չափ այդ մեծ բանակը:

Հաւատա՞նք թէ նորին Վսեմութիւն Տիգրան փառալուստ հաւանած է քուէարկելու խոշոր վարկ մը, որ ազգային անտուկը տուժէ, միմիայն քանի մը ցած հողիններու ֆեճը բերելու և դարձեալ ազգային անտուկին գրամով ազգայինները սարսափեցնելու անպատշաճ ձեռնարկը պատկուելու համար:

Փոխանակ այս ծախքերը ընելու լաւագոյն չէ՞ր որ Վսեմ. Տիգրան փառալուստ ներկայութեան կողմով յորդորէր (ըսուածներուն նայելով) քանի մը հատ «Գոհութիւն և փառաբանութիւն» երգող ինքնակոչ գպիւնները — որոնց գեղեցիկները ոմանց ականջին ու ժամակի պայթումէն արտաբերուած ձայնին չափ ուժգին ու տղեղ կը հնչէ եղեր — որ ելեր զանոնք լռեցնելու համար միայն, կազմակերպեալ բանակ մը իրենց արտօն եկեղեցի փոխադրեր են:

Քանի մը հողիններու պատմածին նախելով, բարեպաշտ ժողովրդեան շատերը, ի տես այդ խուռներամ առջնայակիրներուն, վերադարձաւ զգացումներով առն մեկնած են, հոն առանձին Աստուծոյ հետ խօսելու համար. ոմանք ալ յարմար դատած են հոն մնալ, ի հարկին եկեղեցին հաւաքուած ճկար սեռին պաշտպանութեանը համար: Ուրիշներ՝ իբր հետաքրքիր հոն կը դիմեն, եղած կարգադրութեանց վրայ իրենց հիացումը յայտնելու համար:

Վսեմ. Տիգրան փառալուստ անցեալ օրուան ժողովոյ մէջ Երեսփոխան ժողովոյ անդամաց տուած բացատրութիւնները, որոնք ինչպէս յայտնի է կիրակի օրուան շարժումէն ու եղած կարգադրու-

թիւններէն, խոշորացոյցով նայած ըլլալուն ց'արդ անգի ունեցած շատ աննշան գէտք'րուն վրայ:

Սակայն մենք ալ կը կարծենք թէ, եթէ նորին Վսեմութիւն բարեհաճէր ժողովուրդէն քանի մը հողիններ իրեն կողքի և անոնց տուած բացատրութիւններն ալ մտիկ ընել, այն ատեն հարկ չ'պիտի մնար - վստահ ենք կառավարութեան պաշտօնեաներն յոգնեցնելու և միևնոյն ժամանակ ազգային սրնտուկն ծախքերու ենթարկելու և որ աւելին ու կարևորն է եկեղեցւոյ և անոր առ ժողովուրդն ներշնչած պատկառանքն անխախտ պահելու երբեակ օգուտներու տեսակէտով:

Նորին Վսեմութիւն Տիգրան փառալուստ օրները եկեղեցի փոխադրելու սրոշումը ստորագրելու պահուն, անշուշտ մտքի առջև ունեցաւ թէ, ատոնք՝ ձերբակալելու կը կոչէ այն ժողովուրդ-գասակարգը, որոնցմէ 230 քանիին քուէովը կուտած է յ'Ատենապետութիւն Պատկ. Վարչութեան Երես. ժողովոյ. մանաւանդ թէ դեռ այս ընտրութեանց վրայ 1892 հոկտեմբերէն սկսեալ երկար ու անհաշուելի և մանաւանդ մոռացման դատապարտուելու չափ ժամանակ մը անցած չէ: Երբ այս պարագան նկատողութեան առնուէր կամ Առաջնորդարանի թուղթերուն մէջէն քուէհամարի թուղթերը փնտռուէր, կը յուսայինք թէ գործը մինչև այս աստիճան չ'պիտի ծանրանար ու կնճռոտէր:

Մշակի Պատկ. ստացած մէկ թղթ-թակցութեան կը տեղեկանանք թէ Սիմֆերոփոլի մէջ Բարերգի հայ երիտասարդ մը Գրիգոր Գուլգուլեան, գաշոյնի հարուածներով սպաննած է Հասան Պէկ անունով թուրք մը, որ ժամանակաւ աւաղակութիւն-թիւններով կըրաղի եղեր և հայկական կատարածներէ ժամանակ ալ Բարերգի մէջ ի գործ դրուած խժոժութիւններու գլխաւոր հեղինակներէն մին եղած է և սպաննել տուած Գրիգորի հայրն ու եղբայրը. ասոնցմէ զատ Վարդահան գիւղն ալ արշալիկը պատճառ դարձած է:

Գրիգոր ձերբակալուելով դատարանի առջև կը հանուի և իր դատը պաշտպանելու գործը կ'ստանձնէ անուանի Ռուս փաստաբան Պ. Կարապէտիսկի:

Երգուեալ դատարանաց առջև Գրիգորի դատը տեսնուելով անպարտ արձակուած է:

Մշակի թղթակիցը այս եղելութիւնը բազմապատկելով ներկայէս 3—4 տարի առաջ Գահիրէի մէջ Մուշեղ Գարբիէլեանի մասին տրուած կախազանի վճռոյն և անոր գործադրութեանը հետ. շատ մեծ տարբերութիւններ կը գտնէ Անգլո-Եգիպտական և Ռուսական դատարաններու անաչառութեանը մէջ:

Կիրակի 29 հոկտ. հրապարակու տեղի ունեցաւ Բարերգի. Ընկերութեան սրճարանի մէջ արևելեան ձեռագործներու վիճակահանութիւնը:

Շահող թիւերն են Ա. 153, Բ. 185, Գ. 386, Դ. 66 և Ե. 340:

Վիճակուած պարզեցնելու ըստ պարտականութեան տոմսերուն ստանալու համար, մինչև 13 օր պէտք է դիմել Պատ. կղեմէս Մ. Տատրեանի:

Աղէքսանդրոյ մեր թղթակիցներէն մէկը կը գրէ մեզ. Ոսկան-Նազար մեռաւ ամուսն 24 ին ամենադառն վիճակի մատնուած. անոր թողումը շատ փառաւոր եղաւ, ծանօթ ու անծանօթներ փութացած էին հանգուցեալին իրենց վերջին յարգանքը մատուցանելու:

Հանգուցեալ Ոսկան Նազարի յուղարկաւորութեան առթիւ հետեւեալ հանգանակութեան ցուցակը մեզ զրկուած է ի հրատարակութիւն:

ՄՈՒՏԲ
Տիար Գ. Մնտիկեան, Դահ. ողջ 15 — Վ. Մ. 20 — Ա. 20 — Յ. Ա. Գալֆայեան 20 — Ո՛ն 5 — Յ. Ս. 6 — Ո՛ն 5 — Բարեկամ 40 — Մ. 2. 5 — Պ. 5 — Ո՛ն 2. 5 — Ո՛ն Գ. 10 — Ա. Պ. 10 — Ո՛ն Ընճուսի 5 — Ո՛ն Միհր. 5 — Օրորոգ մը 5 — Յ. Գ. 5 — Գ. Ն. 2 — Գ. Բ. 2 — Ո՛ն Բ. 5 — Հաճի Նշան Ճէպէճեան 2 — Ո՛ն Գ. 5 — Սարգիս Մամիկոնեան 5 — Պ. Մ. 10 — Պ. Մ. (Եկեղ.) 10 — Ո՛ն Ս. 5 — Ո՛ն Մ. Պ. 5 — Մ. Ս. 10 — Ո՛ն Ի. 10 — համալուծար մուտք 257 Դահեկան ողջ:

ԵԼԲ
Դագաղին վճարուած Դահ. ողջ 60 — Մեռելակարին մէկ մար 30 — Մի մեծ պատկի 60 — Երկու փոքր պատկներու 32 — 4 մէթր ժապաւէն 12 — 6 թերթ տակնպատ թուղթ 9 — Մեռելութեան 10 — Կառքերու 19 — համալուծար կըք 232 Դահ. ողջ. ապագայի մէջ տապանաքարի մը համար իր հայրենակիցներու արամադրութեան տակ գրուած Դահեկան ողջ 25:

ՄՈՒՆԵՆԻ . . .

Օ՛հ կուզէի ըլլալ մի գողար յիշատակ, Երբ սեւ խոնկեր միջոցէն քու ճակատ, Գայի խօսիլ քեզ անցեալէ մ'անուշ, տաք. Որ տար ճակտիդ արեւ. մաքրի՛ աչխոյժ շատ . . .

Օ՛հ կուզէի ըլլալ պատկեր մ'անուշակ, Երբ նոր վիշտ մը փոթորկէր սիրտդ աղիկով, Նոր Մրրիկ մը գոչէր, զոտար գանկիդ տակ, Սանձէ՛ր աղոնք իմ մէկ նայուածքս կրակ ու բոց:

Օ՛հ կուզէի ըլլալ երազ մը քնքուշ, Երբ փակէիր վայրիկ մ'աչքերդ դու ի քուս, Գայի թոշտիլ սնարիդ շուրջ, և անուշ Տեսիլներով գէթ մոռնայի՛ր ցաւը թագուս:

Օ՛հ կուզէի ըլլալ երգ մը ես անվերջ, Երբ գիշերներն քունը խոյս տար աչքերէդ, Իմ շեշտերուս մեղմ ու զուարթ ելեւէջ, Օրոր մ'ըլար, թմրեցնէ՛ր ցաւերդ գէթ . . .

Օ՛հ կուզէի ըլլալ ծաղկունք գեղեցիկ, Մէն մի քայլիդ տակ ծլէի՛ անհամար, Եւ ամայի կեանքիդ վրայ թափառիկ, Կանցնէի՛ փայլուն թերթերն իմ վառ վառ:

Օ՛հ կուզէի ըլլալ զեփուռ անուշակ, Երբ քեզ այրէր ամանային տաք արեւ, Գայի՛ ըմպել ճակակդ քրտանց լայն կայլակ, Եւ խաղայի՛ մազերուդ մէջ խիտ ու սեւ:

Օ՛հ կուզէի ըլլալ համբոյր մ'սիրավառ, Երբ տեսնէի աչքերուդ մէջ արտասուք, Չորցնէի՛ ազոնց աղբիւրն ես խալա՛ն, Գպուանքներուս տակ փարատէ՛ր սրտիդ սուգ . . .

Բայց աւա՛ղ . . . չիմ մի յիշատակ, մի պատկեր, Եւ ոչ երազ, երգ կամ նուագ անուշակ, Եւ ոչ ծաղկունք, կամ զեփուռն թեւիկներ, Եւ ոչ գպուանք եւ կամ սիրո՛յ համբոյր տաք:

Սիրո մը ունիմ, քու կրակովդ մ'ստացող, Մի՛շտ բռնկող հրարուս մը կուրծքիս տակ, Սիրո մը քեզմով ուրախ, ցաւիդ՝ ցաւակցող, Այդ սիրտն իցի՛ւ ըլլայ քեզի սփոփանք . . .

Աղէքսանդրիա ՄՍՈՒ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՍԵՐ

ԶԱՓԱՀԱՍՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

ՀԱՅ ԱԻԵՏԱՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ
Ի ՏԱՂՈՒՑԻՅԷ

Առաջիկայ նոյեմբեր ամսոյ 6էն սկսեալ
երեկոյնները ժամը 7էն մինչև 9 1/2 պիտի
աւանդուին Անգղ. Գաղղ. Արաբերէն և Հա-
յերէն դասեր:

Դիմել առ Մ. Յ. ԳՆԱՃԵԱՆ Հիմնադիր-
Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՌ

Յոռօցի Պափ վանաւասան մօտերը, Կամե-էլ-Պեմարի
ճիւղ գիմացը

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս
իրենց նոր բացած փութիւն մէջ, անխարդախ ա-
լիւրէ կը պատրաստուի ԳԱՂՂԻԱԿԱՆ, ԱՆԳՂԻԱ-
ԿԱՆ, ԳՆՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուր-
ճի, թէյի և կաթի պարսիմաթներ, եւ այլն:
Եկաւօժի և Ընկերութիւն մեծ ջանք և
հոգածութիւն պիտի ունենան իրենց գիմող բոլոր
յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:
Յանձնարարութիւնք ամենայն ճշդութեամբ
և փութով կը կատարուին: 11 - 50

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Իւր գործատեղին հաստատած է Ապ-
տինի պալատին ճիշդ դիմացի փողոցը, Շա-
րա-էլ-Պօսթան թիւ 7 տան մէջ:

Սմանէն դժուարահաճներն անգամգո-
հացնելու պայմանաւ կ'արդուկէ շապիկներ
և այն ամեն զգեստեղէններն, որոց համար
արդուկի պէտքը կ'զգացուի:

Ասոնցմէ զատ ունի նաեւ լուացարա-
րութեան յատուկ ճիւղ մը, ուր՝ իրեն դի-
մող յաճախորդներուն ճերմակեղէններն
զատ զատ լուալու գովելի գրութիւնը հաս-
տատած է:

Յաճախորդներուն զիւրութիւն ընծա-
յելու նպատակաւ ճերմակեղէններն ինք
անձամբ պիտի առնէ տուներէն և պիտի
վերադարձունէ սրոյեալ ժամանակին:

ԳԻՆԵՐԸ ԶԱՓԱԻՈՐ ԵՒ ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ
6-8

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՉ

Վկայեալ Տեղական կառավարութիւնէն և
բժշկական վարժարանէն

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա
Ապտիւլ-Աղիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին
գիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկու-
թեամբ ստացած փորձառութիւնը և սովորական
կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակ-
ցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն զիմովները կատարելագոյն գո՞ն պիտի
մնան: 14-24

ԼԵՒՈՆ ԿԻՄԻՒԹԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ յԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՊՕՆՕԿՐԱԾ

Գ.Ա.ՆՐԻԷ, - Մուտի փողոց, - Գ.Ա.ՆՐԻԷ
Ս. և Ս. Սեմալիի վանաւասան գիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ
կը գտնուի պատի և քօնօլի ընտիր տե-
սակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷՒՔ ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճա-
շակի յարմար զանազան տեսակ արանց եւ կա-
նանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, ալ-
ճաք եւ ճիւղ:

Յրանսական և ամերիկեան ապրանքամե-
նաընտիր տեսակներէն զարդեղէններ, շոքաներ,
օղեր, մասանիներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն
կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն
ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

27-50

ՏՕՔՓԷՐ ՍՈՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՐՈՅԺ
Ապսիմ, Շարի Գուպի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-
սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ
ակռաներ:

Կը դադարեցնէ վայրկենագոյն ակռայի ցա-
ւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր
պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-
սակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակռաներուն տոկունու-
թիւնն առ նուազն երկու տարուան համար
կ'երաշխաւորէ: 3 6-10

ՅԱՐՈՒՓԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ
Տայրեի Սանիթի ճիւղ գիմաց

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ
խիտ կոկիկ, հաստատուն և ճաշակաւոր կոշիկ-
ներ, արանց, կանանց և տղայոց համար:

Գինեքը չափաւոր և աժան:
Փորձ մը միայն կը բաւէ: 19-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՄԱՏՈՒՆ

Ի Գ.Ա.ՆՐԻԷ

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր
առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր
Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ սպագրական ամեն կարգի և
տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահագոյեր, Հրախրագրեր, Այցեխոսեր, Յանկեր,
Գիրեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմար, Բնկերութեանց և
վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր սպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոս-
տանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մարտութեան,
ճշգրտագոյնութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եզրպատուի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները
ամենայն խնամք և փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պագար Մուրուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը
Շարա Միւղէլինէն փոխադրած է ի Պագար Մու-
րուր: Յրանսական նորաձեւութեանց յար եւ նը-
ման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած
հմտութեամբ մինչև ցարդ գո՞ն ըրած է իրեն դի-
մող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տոկունու-
թիւնն երբէք տարակոյս չ'վերցնիր:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո՛չ միայն
չափաւոր գներով, այլ և փութով և մեծ խնա-
մով կը պատրաստուին:

Դիմեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնել
և կոշտերէ (նասրը) ազատ մնալ: 22-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ
(բաստը) սեւ, շագանակագոյն և ոսկեգոյն:
Սեւ ներկ շիշով վայրկենագոյն սեւցնող:
Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս
ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադարեցնէ եւ մա-
զերը կը ճոխացնէ: Նմանագոյն ճաղատ (տաղ)
գրուները մաղ կը բերէ. 17 սարուան ճա-
ղատ գրուներու վրայ փորձուած և հիա-
նալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 յըշ-
ող (2 ֆրանք):

Ճերմկցնող շուր շիշով, որը մարմնոյն
բնական սպիտակութիւն կուտայ առանց
զգացնելու: Եզրպատուի մէջ միակը:

Ակռայի փոշի և շուր. մին մաքուր և
ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ
պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ ու-
րոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ
տակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու
վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխա-
նակենք բոլոր ազգաց գործածած նամա-
կադրոյցները: 3 7-8

Lg Gérant Dr A. S. HAGOPIAN